

## ՇԵՔՍՊԻՐԻ ԱՖՈՐԻԶՄՆԵՐԸ

Աֆորիզմի հիմնական առանձնահատկությունը մտքի փայլն է իր բռնկումի մեջ: Եթե այդպիսին է առանձին վերցրած մեկ միտքը, ապա ինչ ասել և ինչպիսի խոսքերով՝ մի գրողի մասին, որի ստեղծագործությունը ամբողջությամբ առած թվում է մտքի մի վիթխարի բռնկման արդյունք: Մտաբերենք Գյոթեի կարծիքը Բեթհովենի մասին. «Ես ինձ համարում եմ ամենակենտրոնացած գրողներից մեկը, բայց Բեթհովենի նման կենտրոնացած մի արվեստագետի շեմ հանդիպել բնավ»: Շեքսպիրը վախճանվել է իր կյանքի 53-րդ տարում: Ապշեցնո՞ղ երկարակեցություն, եթե նկատի ունենանք նրա ծախսած մտավոր էներգիան:

Մի դրամատուրգի աֆորիզմներ իրենն են և միաժամանակ իրենը չեն: Շեքսպիրի մոտ ևս ընթերցողը կտանի այնպիսի իրարամերժ, միմյանց ուղղակի հակասող մտքեր, որ, թվում է, դրանք նույն հեղինակին պատկանել երբեք չեն կարող: Տարբեր ժամանակների, միանգամայն տարբեր հայացքների, տրամադրությունների, հոգեվիճակների պատկանող նրա բազմաթիվ հերոսների կարծիքներն ու խոհերն են դրանք, որ, իհարկե, «իրենն են» նաև՝ Շեքսպիրինը:

Զգետք է մոռանալ ամենակարեւորը. արվեստագետի դատողությունները, ինչ ձևերով էլ դրսեւորված լինեն՝ աֆորիզմների, սենտենցների, մետաֆորիկ արտահայտությունների և այլն,— համարժեք չեն նրա ստեղծած գրական ստեղծագործության հանրագումարին: Վերջինս անսահմանորեն ավելի հարուստ է, գումագեղ, բազմազան, բազմաբովանդակ, բյուր անգամ ավելի իմաստուն, քան այդ երկերից բխող իմաստությունները: Դրա գաղտնիքը գեղեցիկ գրականության հենց բնույթի մեջ է: Եվ, այնուամենայնիվ, այդ մտքերը, սենտենցները, թևավոր խոսքերը չեն կարելի պոկել, անշատել, մեկուսացնել բուն ստեղծագործությունից:

Անուհետեւ:

Աֆորիզմներով մատածելը և գրելը, ափորիզմ կերակը ստեղծագործական ընական բնագործության հարց է: Մեծ գրողներն ունեն աֆորիզմներ, և շափականց շատ, բայց դրանց կշխոր ոչ բոլոր գեղքերում է համապատասխանում նրանց ստեղծագործական արժեքին: Այստեղ վճռական նշանակություն է ստանում այն հանգամանքը, թե այդ ափորիզմները մակարերին՝ և նույնական արժուագործությունից, թե՝ մատացվում են իրեն պատրաստի մարքեր: Այսպիս, օրինակ, նիշշեն իր հայտնի «Ալուստի» է խոսում Զբաղաշար» երկը համարյա բացառապես ափորիզմներով է հորինել և, այնուամենայնիվ, շրջափոխելով Պոլոնիուսին ասված Համլետի մոր խոսքը, կարելի է ասել, որ այստեղ ավելի արվեստ է տրրված, քան նյութ:

Եերսպիրի հումանիստական փիլիսոփայության հիմքում կանգնած է մարդը: Կարելի է ասել՝ նրա ողջ ստեղծագործությունը մի հիմն է մարդու մասին: Մարդկային կոթյանը վերաբերող շերսպիրյան ափորիզմների հեղեղը զարմացնում է մեզ իր հարսաությամբ: Վերածնության դարշրջանի մարդն այստեղ ներկայացված է բազմազան կողմերով, այնքան բազմազան, որ, թվում է, հետազ դարաշրջանները բիշ բան կունենան ավելացնելու նրա նկարագրի վրա:

Նրա մարդը և՛ արքա է, և՛ մուրացկան, բոնակալ ու հավատարիմ հպատակ, փառասեր ու ժուժկալ, վեհ ու ստրկահոգի, ժլատ ու առատաձեռն, դավաձան ու նվիրված, դատավոր ու գող... Նա տեսել է բարին, տեսել է և շարք, ճաշակել է գառնություն, վայելել է ուրախություն, դանդատում է ծերությունից, բայց և երիտասարդ ժամանակ քաշերի քաշն է եղել... Եթե նա սարուկ է այժմ, ապա համոզված ասում է, որ «Ես իմ բաժին ստրկությունը կարող եմ ինձնից մի կողմ շպրտել, եթե կամենամ» («Հուլիոս Կեսար», I, 3), կամ «Շատ անգամ իրենք մարդիկ են իրենց բախտի տերերը» («Հուլիոս Կեսար», I, 2): Եերսպիրի մարդը ժամանակից ու տարածությունից դուրս մի բան չէ: Նա իր դարի դավակն է և դարն էլ՝ իր ստեղծածը, իր սեփական գործը. Նրա թագավորները կարող են իշնել մուրացկանի աստիճանի և մուրացկանները կարող են նախկին թագավորներին իմաստության դասեր տալ: Ամեն, ամեն ինչ տեսնում է նրա արձվային աշքը, և ամեն ինչ՝ իր լինելիության ու կործանման մեջ: Նրա բեմ հանած գործող անձանց ցանկում ամեն դաս ու դասակարգի, ամեն դիրք ու կոչումի, հայացքի ու տրամարանության տեր մարդու կարելի է հանդիպել, բացի, թերևս, կամազուրկներից: Մարդն է ամեն ինչի սկզբն ու վախճանը: Եերսպիրյան հերոսների ականջում դատարկ հըն-

շյուն է ճակատագիրը և նախախնամությունը չէ, որ տնօրինում է նրանց կյանքը, «Մեղանից է կախված այսպես լինել կամ այնպես; Մեր մարմինը մեր պարտեզն է, և մեր կամքը՝ պարտիզանը. կուղենք նրա մեջ եղին կցանենք, կուղենք հաճար. մշտիկ կցանենք, կամ ժոթրին քաղցան կանենք. մեկ տեսակ կանաչեղեն կցանենք, կամ բոլորն իրար կիսառնենք. կթողնենք, որ պարտեզը մեր ծովությունից անբեր դառնա, կամ մեր աշխատությամբ կպարարտացնենք: Այս, այդ կարողությունը և բարելավելու ընդունակությունը մեր կամքիցն է կախված» («Օթելո», I, 3):

Մարդու ազատության այս միտքը հանձարեղ, դարակազմիկ հայտնագրություն էր, անսպասելի նույնիսկ Վերածնության շրջանի ամենաառաջավոր մտածողների համար: Շեքսպիրի հերոսը հերոսականության դադունիքն ի՞ր մեջ է տեսնում, ոչ թե իրենից գուրս. «Մեր դարմանը հաճախ մեջ է գտնվում, իսկ մենք այն վերագրում ենք երկնքին» («Ամեն բանի վերջն է գովելի», I, 1): Միայն բարձր նպատակներն են արժանի գործ դառնալու և նպատակը իրականացված տեսնելուց առաջ մարդու պետք է սովորեցնի իրեն մի բան ուժգին ցանկանալ. «Երբ մենք անգործ նստում ենք, մեր թույլ նպատակները ետ են նահանջում» («Ամեն բանի վերջն է գովելի», I, 1): Իհարկե, կարող են լինել հանգամանքներ, երբ մի գործի կամ վճռի մասին շատ խորհելլ դանդաղեցնում, նույնիսկ արգելակում է նրա կատարումը («Հիշենք Համլետի խոսքը. «Խոհամատությունն այսպես, ամենքիս վախկոտ է դարձնում», III, 1), — բայց ընդհանրապես խոհը և գործը հանգես են գալիս միասնաբար, որպես նույն երևույթի անբաժան կողմեր. բյուրավոր արարք-գործերի մեջ նախընտրելի են նրանք, որ բանականության վճռի կատարումն են: Եվ շեքսպիրյան երազանքը, որ դարաշրջանի երազանքն էր նաև, ամբողջական, զորեղ, ձուլածո բնավորություններ են, վճռական մարդիկ ամենից առաջ, քանի որ «Անվճականը տապալվում է իր ծնունդից առաջ» («Վերոնայի երկու ազնվականները», V, 4):

Որ Շեքսպիրի իդեալը այն մարդն էր, որի մեջ խոհն ու գործը, կամ, որ նույնն է, միտքն ու կիրքը ներդաշնակ միասնություն են կազմում, երևում է այն հոյակապ բնութագրությունից, որ տալիս է Հորացիոյին Համլետը.

Օրհնյալ են նըրանք, որոնց մեջ արյունն ու դատողությունն Այնպես համաշափ զուգախառնված են,

Որ լոկ շրվի շեն բախտի մատերին,

Որ ինչպես ուզե, վըրան նըվագե,

Տուր ինձ այն մարդը, որ իր կրտքերի գերին շբլինի,  
եվ ևս սրբափս մեջ տեղ կրտամ նըրան, սրբափս սրբափ մեջ,  
ենչպիս այժմ քեզ:

Այս տեսակետից նա շատ ու շատ առաջ է այնպիսի հումանիստներից, որպիսին, առնելք, Մոնտենն է, որ Հակազրսիկով՝ միջնադարյան մտածողությանը՝ առաջնությունն անվերապահորեն տալիս է գործին: Այսպիս, օրինակ, Հակազրելով Աթենքը Սպարտացին, նա նախապատվությունը տալիս է վերջինիս այն նկատառումով, որ սպարտացիք գործի մարզիկ էին և ոչ թե խոսքի: «Ասում են, որ Հոնետորներին, նկարիչներին և երաժիշտների հարկ էր լինում փնտրել Հունաստանի մյուս քաղաքներում, բայց օրինազիրների, դատավորների ու զրահրամանատարների՝ միայն Հակեգեմոնիայում: Աթենքում սովորեցնում էին լավ խոսել, աշխատել՝ լավ աշխատել... Այնտեղ մտահոգվում էին բարի մասին, այստեղ՝ գործի: այնտեղ անխոնչ կերպով վարժեցնում էին լեզուն, այստեղ՝ հոգին:

Եթե մարդն է սաեղծում իր պատմությունը, ապա նա չի կարող անսխալական լինել և այդ պատմությունն էլ չի կարող լինել իդեալական: Շեքսպիրի հերոսները մեծ են ոչ թե անսխալականությամբ, այլ նրանով, որ վսեմ իդեալներ ունեն, իրենց կարողությունների առավելագույն շափով պայքարում են զրանց իրականացման համար ու եթե չեն էլ հասնում իրենց նպատակին, բայց ցույց են տալիս, որ այդ է միակ ճանապարհ՝ նպատակի համար բնկնելը: Անտիկ դրաման մի որոշ իմաստով զանվում էր անելանելի շրջանակի մեջ, քանի որ հանգամանքներն էին տնօրինում մարդկանց բախտը: Գործողության շարժիչ ուժը տեսնելով խարակուերի մեջ՝ շեքսպիրլան դրամաշրշանի դրամատորգները մի հարվածով անսահմանորեն լայնացրին գրական այդ սեռի ընդունական շրջանակները: Ցվյալ դրամատիկական երկի կոմպոզիցիան պայմանավորված է բնավորությունների փոխադարձ կապով, այն իրական կյանքով ու միջավայրով, որտեղ և դիտված էին այդ բնավորությունները:

Գործողության ազատությունը, ինքնին հասկանալի է, բերում էր իր հետ և մտքի ազատություն: Շեքսպիրյան հերոսներն այնքան ազատ են զգում իրենց, այնքան անկաշկանդ, որ թվում է՝ աշխարհաբաղաբացիներ են: Ցաղոյի այն խոսքը, որ ասում է, «Թե քննադատ չեմ՝ ոչնչի պետք չեմ» («Օթելլո», II, 1), վերաբերում է բոլորին՝ առանց խտրության: Այդպիս են դատում ամենքը, հասարակական սանդուղքի ինչ աստիճանի վրա էլ լինեն:

Մահվան մահմում չէր այն գարաշրջանը, որի գերեզմանափորները դարձան Վերածնության շրջանի մեծ մտածողներն ու արվեստագետները և ոչ էլ խանձարուրի մեջ էր այն մյուսը, որի երգիչներն էին նրանք: Դարաշրջաններն անողոք գոտեմարտի մեջ էին, և դա էլ իր խոր կնիքը դրեց այդ արվեստագետների ստեղծագործության վրա: Ամեն արվեստագետ ինչ-որ շափով արտացոլում է իր դարաշրջանի հակասությունները, ինչպես և ներքին հակասություններն այն մարդկանց, որ ներկայացնում են իրենց ժամանակը, բայց այդ հակասություններն ընդգրկելու, դրանց հավերժական պայքարի արտացոլման առումով Շեքսպիրն աշխարհի հազվագյուտ հանճարներից է: Նրա ընկալմամբ հակասություններով լի է և' մեծ աշխարհը, որ մարդկային հասարակությունն է, և' փոքրը, որ մարդկային հոգեբանությունն է, նույնքան, եթե ոչ ավելի խոր ու անհատակ, որշափ և մեծը: Նրա հերոսները գործում են բազմատեսակ հակասությունների հանգուցագծում, սա է ահա, որ հիացրել է Պուշկինին, այստեղ է նա տեսել ճշմարիտ դրամատիկական բնավորության ստեղծման գաղտնիքը:

Զիա մարդկային մտքի և հույզի մի բնագավառ, որտեղ նա հանդես բերած լինի իրեն որպես շարժման և զարգացման համապարփակ օրենքի փայլուն գիտակ նաև այն ոլորտում, որ մենք կոչում ենք հոգեբանական աշխարհ: Ամեն ինչում և ամենուր նա տեսնում է երևությների (սեր, խանդ, փառասիրություն...) ժագումը, զարգացումը և վախճանը:

Խոսքի և գործի այն կապը, որի մասին ակնարկվեց վերևում, մի նոր դրսեւորում է ստանում այս գեպքում, եթե մենք անցնում ենք նրա բնավորություններին: Շեքսպիրի աֆորիզմներով, նրա իմաստուն մտքերով հիացողները միշտ պետք է հիշեն, որ դրանց մի զգալի մասը պատկանում է նրա բացասական հերոսներին:

Թոլոր պալատականների նման Պոլոնիուսը ևս իր ծառայությունն սկսել է ստրկական խոնարհամտությամբ և մեծ սենեկագետի աստիճանին է հասել ոչ միայն խելքի, այլ խելքը թաքցնելու շնորհիվ: Նա ծառայում էր հանգուցյալ թագավորին ճիշտ այնպես, ինչպես հետո ծառայում է նրա եղբորը՝ Կավճիոսին: Գիտե՞ արդյոք նա իր նախկին թագավորի սպանության մասին, դժվար է ասել, բայց եթե գիտենա էլ, դրանից ոչ մի օգուտ չունի սպանվածի որդին: Նա ոչ մի պայմանով այդ շի ասի, որպեսզի մնա արքունիքում գրաված բարձր դիրքում:

Իհարկե, նա գնահատում է երիտասարդ Համլետին. ոչ նրա անհատականությունն, անշուշտ, այլ հենց ծագումը, դիրքը: Պոլոնիուսը դեմ

շէ նրա և իր գոտեր միջի ստեղծված մտերմությանը, բայց չի հավատում, թէ զա կիրքանաւ ամուսնությամբ եվ համոզում է Օֆելյային՝ զուսպ լինել Համլետի նկատմամբ, հավատ շրնծայել նրա ամեն խոսքին:

Նա առաջարկում է իր ծառայությունը՝ լրտեսելու Համլետին: Այդպիսին է այդ մարզու նկարագիրը, բայց ահա տեսեք նրա խոսքը: Բոլոր այն տեսարաններում, որ նա հանգես է գալիս, իրեն դրսեռում է իրքի բանիմաց և փորձառու մարզի նրա դիալոգներն Օֆելյայի, մանավանդ Լաերտի հետ՝ հիմնավի են, ամեն հայր չէ, որ ացդպիսի իմաստուն խորհուրդներ կարող է տալ օտարություն զնացող իր զավակին:

Բայց ահա այդ խորհուրդների մեջ կա մի խոսք, որ ապշեցնում է իր խորությամբ.

Այս ամենից վեր, միշտ անկեղծ եղիր գու ինքդ քեզ հետ,

Եվ հետեւ այս բանին, ինչպես տիվը գիշերին,

Որ ոչ սրի հետ չես կարող կեզծել

Սա Շեքսպիրի ամենահաճարեղ մտքերից մեկն է, որ հետո պետք է դառնար բնարան բոլոր լուսավորիչների, ընդհանրապես բոլոր մեծ մտածողների համար:

Օթելլոն ու Յագոն երկու գեմառում կանգնած հակառակորդներ են. Օթելլոն, ինչպես նշվել է իրավացիորեն, արտահայտում է Վերածնության դարաշրջանի մի կողմը՝ լայնաշունչ հումանիզմը: Յագոն՝ մյուս կողմը, նրա նեղսիրա էգոիզմը: Նրանք տարբեր աշխարհների մարդիկ են՝ նույն աշխարհում: Կասիոյի տեղակալ նշանակվելը հավասարակշռությունից հանում է Յագոյին, որ իր դանդաղ առաջանալու պատճառով արդեն շարացած էր ամենիրի, բայց առաջին հերթին՝ Օթելլոյի դեմ: Իր դարի բոլոր կրօնա, արյունախանձ, արկածամոլ բախտախնդիրների նման, նա իր ցասումը հետանում է Օթելլոյի անակնկալ, զլաւապուլտ հաջողությունների վրա՝ Դեղքեմոնայի սիրո և սենատի նոր նշանակման կապակցությամբ:

Յագոն ճանաչում է և նույնիսկ ընդունում Օթելլոյի աղնվությունը:

Մավրը մի անկեղծ, սրտաբաց մարդ է,

Որ բոլոր պարկեշտ թվացողներին պարկեշտ է կարծում...

Ճանաչում է նաև իրեն, իր բնավորությունը: Ճանաչում է՝ ինչպես ոչ բրովհետն՝

Այն չեմ, ինչ որ կամ

խոստովանում է նա: Եթու նա ամենավճռական տեսարանում անսպասելի կերպով Օթելլոյի առաջ բաց է անում իր ախտավոր, կասկածոտ բնավորությունը, միանգամայն անկեղծորեն է խոսում:

Վա՞հ, գուցե ստոր, սխալ մտքեր են:

Ո՞ր պալատն է այն, որ անարդ բաներ ներս չըսողոսկեն.

Ո՞վ ունի մի կուրծք այնպիս անապակ,

Ուր կեղտուտ խոհեր ատլան չկազմեն,

Ել օրինավոր խորհուրդներին կից դատի լբբազմեն:

Եվ ապա՝

... գուցե սխալ են ենթադրածներս,

Եվ պետք է ասեմ, թե մի ախտ է դա իմ բնության մեջ՝

Հանցավոր բաներ տեսնել ամեն տեղ: Եվ իրավ, հաճախ

Կասկածու միտքը մեղք է համարում բաներ, որ մեղք չեն:

Այսպես է ահա Շեքսպիրը հասնում այն բանին, որ շարագործը չի վերածվում վերացական շարի, այլ դառնում է այն շարահոգին, որ ոտքից գլուխ մարդ է, մարդկային որոշակի հասարակության ծնունդ:

Ինչպես է ստեղծում իր աֆորիզմը Շեքսպիրը:

Հիշենք Աստվածաշնչի առաջին ֆրազը, որ և առաջին աֆորիզմն է միաժամանակ. «Ի սկզբանե էր բանն»:

Հիշենք Գյոթեի Ֆառատին՝ բազմամյա խոհերից հետո հանած եղրակացությունը. «Ի սկզբանե էր գործը»:

Երկու գեպքում էլ աֆորիզմները նույն սկզբունքներով են կառուցված. դրանք, նախ, մեծարժեք մտքեր են, և ապա՝ արտահայտված են հազվագյուտ սեղմ ձևի մեջ: Հետագայում աֆորիստիկ միտքը պետք է արտահայտվի ամենատարբեր, գունագեղ, բազմատեսակ ձևերի մեջ, չկորցնելով, միշտ պահելով իր հիմնական հատկությունը՝ մեծարժեք միտք, ընդհանրապես ուշագրավ միտք, վերջապես՝ միտք: Հենց այս միտքն է աֆորիզմի բովանդակությունը, հոգին:

Վերցնենք այլ տիպի աֆորիզմներ.

«Ոճը ինքը մարդն է»:

«Երբ խոսում է զենքը, լուս են մուսաները»:

«Ոչնչից ոչինչ դուրս կգա»:

Սրանցից առաջինն ունի արդեն բանաստեղծական գյուտ. ոճը, որ մարդու խոսքն է, անսպասելի կերպով համեմատվում (հավասարեցվում) է նույն այդ մարդուն:

Երկրորդ աֆորիզմի մեջ համեմատվում են անհամատեղելի այնպիսի հասկացություններ, ինչպես զենքը (պատերազմը) և մուսաները

(Երզը), դրանք համեմավում են սակայն նրանով, որ դիտվում են իրքեանհամառեղի երեսլթներ, երբ մեկը՝ մուսաները, որ իրոք խոսող (Երզող) էին՝ լուսմ են և գենքը (որ այս դեպքում անձնավորված է)՝ խոսում:

Երբորդ աֆորիզմը ես կատարյալ է իր կառուցվածքով. սա ոճի շատ խորունկ միտք, որ արտահայտված է անսպասիլի մի ձեի մեջ: «Զվիյց ձուս գուրս կզա» պարզ խոսքը փոխված է «Զվիյց ձու գուրս կզա» ոչինչ չասող կամ անհեթեթ խոսքով: Բայց ոչնչից գուրս եկած բանը նույնական ոչ այլ ինչ է, եթե ոչ անիմասություն, անհեթեթություն, մի բան, որ ուզում էր ապացուցել և որին փայլուն կերպով հասել է այս աֆորիզմ ստեղծողը: Ի՞արկե, կարելի էր ասել և ասվում է՝ «Ոչնչից ոչինչ գուրս չի գա», բայց սա արգեն սովորական, առօրյա միտք է, և ոչ աֆորիզմ: Անսպասիլի ձեր շփոխեց բովանդակությունը, բայց փոխեց խոսքի սրակը, նրան բարձրացրեց զեզեցիլ խոսքի աստիճանի, վաս արտահայտություն տվեց նրան, ալտինքն, ի վերջո, նպաստեց մտքի (բովանդակության) սրությանը:

Վերցնենք այլ գարի և այլ ոճի աֆորիզմներ:

«Կան մարդիկ, որոնք դիտում են իրենց բարեկամների պակասությունները. դրանից բնավ օգուտ չկա: Ես միշտ հետեւել եմ իմ հակառակորդների առավելություններին և միշտ օգուտ եմ քաղել այդ բանից» (Գյոթե):

«Հիշիր, մարդս այլ բնարություն չտնի. Նա պետք է մարդ լինի» (Ստանիսլավ Լեյց):

«Շատ ավելի դժվար է անել այն ամենը, ինչ ուզում ես, բան թե չանել այն, ինչ ուզում ես» (Ա. Սկրյաբին):

Այս աֆորիզմներն իրենց կառուցման սկզբունքով շատ ավելի բարդ են առաջիններից: Եթե նրանց մեջ միտքն էր իշխում, ապա այստեղ միտքը դրսերպված է բավականաշափ բարդ ձեի մեջ, երբեմն նույնիսկ այնքան բարդ, որ ձեն է իշխում մտքին:

Գյոթեի միտքն աֆորիզմ է դարձնում, իշարկե, նրա ճարտար կառուցվածքը: Սա միաժամանակ ընդդրկում է երկու կողմերի (բարեկամներ, հակառակորդներ) կրկնակի հատկանիշներ (պակասություններ, առավելություններ), բայց արտահայտվում է ոչ թե ուղիղ, այլ շրջուն ձևով (բարեկամ-պակասություն, հակառակորդ-առավելություն): Արդյունքը՝ բարդ մտքի և բարդ ձեի կատարյալ ներդաշնակություն:

Լեյցի աֆորիզմը, իմաստով խորունկ, իր կառուցվածքով դարձյալ բառախաղի վրա է հիմնված: Սա կարող է կաղապարված լինել հետեւյալ անցումներով.

«Մարդու մարդ է»:

«Մարդու պետք է մարդ լինի»:

«Մարդու չի կարող մարդ լինել, եթե նույնիսկ կամենա»:

Մինչև այստեղ գեռ ափորիզմ չկա: Բայց ահա ծագում է այն կատակը, թե ծնվելուց հետո մարդս կարող է և ընտրություն անել՝ մարդ լինել, թե՝ մի այլ արարած: Որքան էլ սրամիտ, դարձյալ այստեղ ևս ձևն իրեն գգալ է տալիս:

Ինչ վերաբերում է Սկրյաբինի աֆորիզմին, ապա նրա բարդությունը գալիս է այն բանից, որ կոմպոզիտորն իր առջև դնում է ոչ թե մեկ, այլ երկու խնդիր միանգամից, ըստ որում դրանք տարբեր որակի, տարբեր լարվածություն կամ ջանք պահանջող խնդիրներ են:

Եեքսափիրյան աֆորիզմներն ըստ կառուցվածքի կարելի է բաժանել հետևյալ ենթատեսակների. աֆորիզմներ, որոնց հիմքը համեմատությունը, պատկերը կամ մետաֆորն է, իմաստում մտքեր, որոնց գեղեցկությունը երևույթների կրկնակի (հակունյա) կողմերի վրա կառուցված լինելն է և սենտենցներ, որոնք կարելի է և շրջուն կոչել, թեև սրանք ևս ունեն առաջինի կամ երկրորդի տարրերը:

«Ներումը՝ երկրորդ հանցանքի ստնտուն է»:

«Վշտին վարժվելով՝ սանձահարվում է մոլեգին վիշտը»:

«Երկու-երեք տարուց ի վեր նկատում եմ, որ մեր դարը այնքան սրամիտ է դարձել, որ գյուղացու ոտնամանը դիպշում է պալատականի կրունկին և նրան ցավեցնում է»:

Առաջինը սրանցից հիմնված է հակադարձ համեմատության վրա: Մենք սովոր ենք մտածել, և շատ գեղքերում այդպես էլ է իրոք, որ առաջին հանցանքի ներումը իր արգանդի մեջ սպանում է երկրորդ հանցանքը. Հանցագործը մարդկայնությամբ է հատուցում օրենքի կամ հասարակության կողմից իրեն շնորհված ներումը: Բայց ահա քիչ չեն գեղքերը, երբ ներելով հանցագործին, նրան հնարավորություն են տալիս կատարելու երկրորդ և հաջորդ հանցանքները: Այսպիսով, ներումը երկրորդ հանցանքի ստնտուն եղավ: Բայց ծայրահեղությունները միանում են, — ասում է լատինական առածը: Եեքսափիրն այստեղ չի քարոզում բացարձակ անհանդուժողականություն. դա կհակասեր նրա մտածողությանը, որի հիմքում օրենքը չէր, այլ մարդը: Ի վերջո, ներումն էլ պատիժ է, նույնիսկ ավելի խիստ, միայն թե՝ ճշմարիտ մարդու համար:

Երկրորդ աֆորիզմով բանաստեղծը խորհուրդ է տալիս վիշտը կրել անմոռն, ոչ թե նրա դեմ լինելու մտքով, այլ ծայրահեղության մեջ

ըլնկներու, նրան խելացի զիմագրելու համար։ Մայրահեղությունների հակ-  
ված բնափորությունները միշտ չեն, որ ուժեղ են։ Երբ մարզս չի կարողանում  
հաղթահարել փոքր վիշտը, նա հաղթիվ թե կարողանաւ դիմանալ մեծին։

Երրարդ աֆորիզմը պատկերավոր մտածողության մի հրաշակեր-  
տություն է, շրմից-շուրջ անցնող Կինոցի գրություն երեք հարյուր տարի  
առաջ Ծերսովիրն արվեստի մեջ ավելից այն հասկացությունը, որ հիմա ան-  
վանում ենք «խոշոր պլան»։ Զահսնելով բայց սպներին, բայց կոշիկներից  
ձանաշերով պալատականին և զյուղացուն, մենք նկատում ենք ուրերից  
նրանց խաղը։

Զննենք մի բանի ուրիշ աֆորիզմներ։

«Որքան որ կանացք ծանր են պճանորով, թեթև են բարբով։»

«Բառերը գործի տարության վրա պազ շանչ են փշում։»

«Լավ է չփառությամբ իմաստուն լինել, բան թե զփառությամբ հրա-  
շակվել տղեա։»

«0», որքան բավ է արաւավել ուրախությունից, բան թե ուրախանակ

արտասուրների վրա։»

«Ծերությունը խելսք մարզուն հիմարացնում, իսկ հիմարին խելո-  
րացնում է։»

«Զի կարող բանականությունը մարել այն կրակը, որի վրա յուղ է  
լցնում շահելությունն»։

Այս բոլոր աֆորիզմներն ել ստեղծված են նույն սկզբունքով։ մի  
երեսոյի և նրա հակառակ երեսոյի, այդ երեսոյի մի հատկությունն այս-  
տեղ և նրա հակառակ հատկությունն այնտեղ, բայց որում՝ ծայրահեղու-  
թյունների միասնությամբ։ Աֆորիզմն, ասես, ունի երկու թե, որոնք միշտ  
ձգուում են հավասարակշռության։ Եթե համեմատության «այս կողմում»  
ծերություն է, ապա «այն կողմում» երիտասարդությունը պետք է լինի,  
եթե «այստեղ» ուրախությունն է, ապա «այնտեղ» արտասուրը պետք է  
լինի և ալլն, Բայց այս գեպրում նրանք չեն կարող հավասարվել։ Ժերու-  
թյունը հավասար չէ երիտասարդությանը և ոչ էլ ուրախությունը՝ արտա-  
սուրին։ Համեմատվող կողմերը հավասարակշռուում են, երբ ձեռք են բե-  
րում իրենց բնույթին հակառակ արժեքներ, ոչ թե ընդհանրապես հակա-  
ռակ, այլ ավյալ համեմատության մեջ հակառակ, ավելի միշտ՝ մի կողմը  
ձեռք է բերում մյուսին ներհատուկ, նրա համար ամենաբնորոշ հատկա-  
նիշը։ Այսպես, օրինակ, ուրախությունը պատճառում է արտասուր, իսկ  
արտասուրը՝ ուրախություն, որը հակառակ է առօրյա մտածողությանը։

Բայց հենց այս հակասության մեջ է ամբողջ Վիլյամ Շեքսպիրը, այստեղ է նրա «տարերքը», այստեղ է նրա դարաշրջանի «տարերքը»:

Ի՞նչ է նշանակում «Շեքսպիրունը խելոք մարդուն հիմարացնում, իսկ հիմարին խելոքացնում չու։ Նախ, բաց անենք կատակը. այդ մարդկանցից ո՞չ առաջինն է խելոք, ո՞չ էլ երկրորդը՝ հիմար։ Միգուցե բանաստեղծն ուղում է ասել, թե առաջին մարդը երիտասարդ հասակում խելոք է «թվացել», իսկ երկրորդը (հիմարը) խելոք է թվում հիմա՝ ծեր հասակում։ Կարելի է ենթադրել և այլ նրբություն։ Խելոք չի այն մարդը, որ ծեր հասակում կորցնում է իր միտքը և, ընդհակառակը, մարդս երբեք լոկ կենսափորձով չի կարող խելոք համարվել, եթե նա այդպիսին չի եղել հասուն հասակում և այլն։ Մի խոսքով, այս աֆորիզմն ևս շատ նրբերանգներ ունի, շատ մեկնությունների է տեղիք տալիս։

Նույն կոնտրաստը տեսնում ենք թագավորի ողորմությունը հայցող աղքատի մասին հորինված սենտենցում։ Իրական հարստությանը (միապետի) հակադրվում է աղքատի բարոյական խեղճությունը։ Նա կարող էր ի՞ր նմաններից օգնություն հայցել. այդ դեպքում չէր լինի աֆորիզմի էությունը կազմող ծայրահեղ բևեռացումը. Հքավորի ողորմելիությունը հիմա դիտվում է ոչ թե նրա ընշագուրքի լինելու մեջ (այդ դեպքում ևս համեմատություն չէր ստեղծվի), այլ որ նա թագավորից է ողորմություն հայցում, այն թագավորից, որի մոտ իրավունք չունի ստորանալու, համոզված, որ այդ խնդիրը կմերժվի։

Վերջապես երրորդ տիպի աֆորիզմը, ինչպես նախապես էլ ասվեց, չափազանց բարդ է, բարդ՝ մտքերի ասոցիացիայի տեսակետից։ Դասական օրինակ կարող է ծառայել Համլետի բացականշությունը մոր հասցեին։

«Թուլություն, անունդ կին է»։

Ինչպես կարող է ծագած լինել աֆորիզմը, մտքերի ինչ հաջորդականությամբ։

Փորձենք գտնել ինքներս։

«Կինը թուլություն է»։

«Կին, անունդ թուլություն է»։

«Թուլություն, անունդ կին է»։

Սրանցից առաջինի մեջ ինքնատիպ միտք չի պարունակվում։ Կինը շատ անգամ է համեմատվել թուլության հետ։ Բայց ահա երկրորդն ուշագրավ է. կնոջը նոր անուն է տրվում, իր ամենաբնորոշ հատկանիշ-

ներից մեկի անունը Ստելայն կարելի է և այլ հատկանիշներ գտնել կնոջ մեջ, ասենք՝ նրա գեղեցկությունը:

Այդ դեպքում մեր միաբն այս ձեռափսխումները կլրեր.

«Կինը գեղեցկություն է»:

«Կին, անունդ գեղեցկություն է» և այլն:

Բայց ահա Շեքսպիրի փետակրե զրիշը կատարում է ասպահով մի դյուտ. թուլության անունն է զնում կին: Ուրեմն՝ ամեն տեսակ թուլության, ում մոտ էլ հանդես գա, երբ էլ այն արտահայտվի:

Այսպիս է մտածում հանճարը:

Բայց մի՞նչ ճիշտ այդպիս:

Ո՛չ, իշարկեց Համլետի մոտ այս արտահայտությունը կարող էր ծագել մի անգամից, առանց ինչ-որ աստիճաններ անցնելու: Եվ դա կիններ ճիշտ և դա՛ է միակ ճիշտը: Մենք գես ոչինչ չգիտենք ստեղծագործական աշխատանքի բուն պրոցեսի մասին: Համարյա ոչինչ չգիտենք: Եվ այս տողերն էլ այն նպատակն են հետապնդում, որ ցույց տան, թե որքան անրունելի է մարդի ընթացքը:

Եվ այնուամենայնիվ, դա պետք է անել: Ճիշտ է, այնտեղից չի կարելի սովորել մտածել այս կամ այն մեծ մարդու նման, բայց ընդհանրապես մտածել սովորել՝ կարելի է: